

ՄԻՆԶԵՐԻ ԼՈՒԻՍԻ ՌՈՍԱՆՏԻԿ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ «ՄԱՔՈՒՐ ՕԴՌՈՒՄ» ՎԵՊԸ

Նարինե Չաքարյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում է քսաներորդ դարի ամերիկացի գրող Մինքլեր Լուիսի աշխարհայացքում ռոմանտիկական տարրերի դրսևորումը: Դիտարկվում է Լուիսի ստեղծագործական ուղու առաջին շրջանը, երբ հեղինակի ռոմանտիզմը առավել ցայտուն է արտահայտված: Նախ տրվում է լուիսյան հերոսների ընդհանուր բնութագրումն ու դասակարգումը, ապա ներկայացվում է «Մաքուր օդում» վեպը: Պատկանելով գրողի ստեղծագործության առաջին փուլին՝ այս վեպն իր մեջ լավագույնս կենտրոնացնում է այն բոլոր ակնհայտ գծերը, որոնք բնորոշ են լուիսյան ռոմանտիզմին:

Բանալի բառեր. ռոմանտիկական տարր, ռեալիզմ, կիստոտիզմ, ըմբոստ կերպար, արկածախնդիր հերոս:

Ներածություն

Համաշխարհային գրականությունը բարդ ու բազմաճյուղ համակարգ է, որի բաղադրիչ մասերի, այն է՝ առանձին ազգային գրականությունների և նույնիսկ անհատ գրողների միջև աղերսները սերտ են և անխուսափելի: Այդ իմաստով բացառություն չէ և Մինքլեր Լուիս հեղինակը, ում կապն իր ժամանակակից գրողների և իր ազգի գրականության հետ, առհասարակ, պայմանավորված է ընդհանրությունների և յուրահատկությունների այն ամբողջությամբ, որով Լուիսն առանձնանում է մյուսներից և կարևորություն ու հետաքրքրություն ներկայացնում մեզ համար:

Հիրավի, ցանկացած գրողի համար դժվար է պահել ինքնուրույն ձեռագիրն ու նկարագիրը այնպիսի պայմաններում, երբ շրջապատված է տաղանդաշատ գրողների մի իսկական աստղաբույլով: Լուիսին դա հաջողվում է: Նա ոչ միայն իր արժանի ու ինքնատիպ տեղն է հաստատում ամերիկյան գրականության մեջ, այլև ճանաչում ձեռք բերում երկրի սահմաններից դուրս՝ դառնալով առաջին ամերիկացի գրողը, որ արժանանում է Նոբելյան մրցանակի:

Ռոմանտիզմը Մինքլեր Լուիսի աշխարհայացքում

Ինչ վերաբերում է Մինքլեր Լուիսի աշխարհայացքին և կողմնորոշումներին, ապա այստեղ ամերիկյան գրաքննադատությունը միակարծիք չէ: Լուիսի

կենսագիր Մարկ Շուրերն, օրինակ, Լուիսի մեջ տեսնում է և՛ ռեալիստական, և՛ ռոմանտիկական տարրեր՝ նշելով. «Այն, ինչ քննադատները տեսնում էին նրանցում (Լուիսի վաղ վեպերում – Ն.Չ.) «ռեալիզմի» և «սիրավեպի» անսովոր սերտաճումն էր» (Schorer Intr. 1962:2): Շերվուդ Անդերսոնը ևս մի տեսակ ներքին հակասություն և պայքար է տեսնում Լուիսի հոգեկերտվածքում՝ փաստելով. «Մի տեսակ պայքար կա այն. Մինքլեր Լուիսի ներսում և նույնիսկ այս տաղտկալի, անլույս արձակում, ինչպիսին նրանն է, կա մի տեսակ բացվող արշալույս» (Anderson 1962:28):

Եվ իրոք, լինելով ռեալիստ գրող՝ Մինքլեր Լուիսն այնքան էլ հեռու չէր ռոմանտիկական մտածելակերպից: Դարաշրջանն ու համընդհանուր մտածելակերպը, գրական տեղեկներն ու հենց իր անհատական ոճը ստիպում էին նրան թղթին հանձնել ռեալիստական կաղապարներին համապատասխան ստեղծագործություն, բայց չէին արգելում նրան երազել ռոմանտիկների մասն: Այսպիսով, Մինքլեր Լուիսը ռեալիստ էր, ով ոչ միայն չէր փնտրում և հերքում ռոմանտիկներին, այլև ինչ-որ առումով մտածում էր նրանց մասն, քանզի, ինչպես ամերիկացի գրաքննադատ, գրականագետ Հարոլդ Բլումն է գրում, «Լուիսը ծնվել է իբրև ռոմանտիկ և ազատասեր գաղափարախոս» (Bloom 1988:7):

Մինքլեր Լուիսի աշխարհայացքին վերագրվում է ևս մեկ բնութագրիչ կողմ: Դա նրա հայացքներում կիխոտական տարրերի առկայությունն է: Եվ պատահական չէ, որ նույն Հարոլդ Բլումը, խոսելով «Էրոուսմիթ» վեպի մասին, գրում է. «Էրոուսմիթը, ինչպես Լուիսի մյուս վեպերի մեծ մասը, կիխոտիկ պատմություն է» (Bloom 1988:50): Մինքլեր Լուիսի կիխոտական կողմնորոշումների մասին վկայակոչում է նաև ամերիկացի գրականագետ Մարտին Լայթը, ով մի ամբողջական աշխատություն ունի այդ թեմային նվիրված, որ վերնագրված է «Մինքլեր Լուիսի կիխոտիկ տեսությունը»: Կիխոտիզմը որակելով իբրև «շեղում, որ ծնվում է ռոմանտիկական գրականության ընթերցանության ազդեցությամբ՝ Լայթն ապա հավելում է. «Մինքլեր Լուիսն իր աշխարհընկալմամբ կիխոտիկ էր և իր արձակում կերտել է կիխոտիկ հերոսների հայտնի պատմություններ» (Light 1975:vii): Ինքը՝ Լուիսը, 1927 թվականի օգոստոսին Բեռլինում գրած իր ինքնանկարում իր իսկ անձի մասին գրում է. «Նա սկսեց իբրև իսկական ռոմանտիկ» (Parry 2005:11):

Հիրավի, սերվանտեսյան կիխոտիկ մեկուսացումներ, նոր աշխարհի կամ նոր կյանքի որոնման ձգտումներ կարելի է տեսնել Լուիսի գրեթե բոլոր շրջանների ստեղծագործություններում: Նոր կյանք ու արկածներ է փնտրում «Մաքուր օդում» վեպի հերոսուհին՝ Քլեր Բոլթվուդը, ով մի երկար ուղևորություն է ձեռնարկում Խաղաղ օվկիանոսի երկայնքով: Ամբողջ վեպը հենց այդ ուղևոր-

րության նկարագրությունն է: Նպատակային ուղևորություն է կատարում Քերոլ Միլֆորդը՝ «Գլխավոր փողոց» վեպի հերոսուհին, ով գնում է գավառական Ուիննեմաք քաղաք՝ կամենալով այն բարեփոխել: Հասկանալով, որ անկարող է հաղթահարել հետադեմ ուիննեմաքցիների ընդդիմության պատճենը՝ հերոսուհին ապա ուղևորվում է Վաշինգթոն՝ նոր կյանք և սփոփանք գտնելու մեծագույն հույսերով, իսկ վերջում կրկին վերադառնում է Ուիննեմաք: Մարտին Էրոուսմիթը համանուն վեպում չորս անգամ փոխում է իր բնակության վայրը՝ ի վերջո մեկուսանալով և զբաղվելով լոկ գիտական հետազոտությամբ: Ստանդարտացված հասարակությունից փախչելու փորձեր է անում նաև Ջորջ Բեբիթը, ով որոշ ժամանակով հեռանում է Ջենիթից, բայց ի վերջո վերադառնում՝ ներքուստ ընդունելով իր պարտությունը: Դե իսկ Դոդսվորթները «Դոդսվորթ» վեպում նոր կյանքի ու նոր արժեքների բացահայտման ակնկալիքով Ամերիկայից Եվրոպա են հասնում, որտեղ դեպքերը նրանց համար չնախատեսված ընթացք են ստանում:

Դժվար է ասել՝ ոգեշնչվե՞լ է Սինքլեր Լուիսը Սերվանտեսի հայտնի վեպից, թե՞ ինքն էլ նրանից անկախ նախընտրել է իր հերոսների երազանքների իրականացման և խնդիրների լուծման միևնույն ուղին: Համենայն դեպս, այդ մասին ոչ մի վկայություն չկա: Մի բան, սակայն, կասկածից դուրս է. Սինքլեր Լուիսն իր ստեղծագործական ուղին սկսել է իբրև ամենախկական ռոմանտիկ:

Լուիսյան հերոսը

«Անկենդան գիտելիքի և հուզականության իմաստով՝ այս մարդիկ զարիուրելի գաղտնագրեր են՝ զուրկ անհատականությունից կամ անձնական գիտակցությունից, խստորեն ղեկավարվելով սահմանված սոցիալական պահանջներով. և այդուհանդերձ, մեռած լինելով, նրանք միասին չեն կառուցում հասարակություն որևէ իրական իմաստով, այլ միայն խումբ՝ խումբ, որ միաժամանակ և՛ կառավարում է նրանց, և՛ պաշտպանում նրանց իրենց իսկ դատարկության սարսափներից», – դիպուկ կերպով գրում է Մարկ Շուրերը լուիսյան հերոսների մասին: (Schorer 1962:50) Եվ իսկապես, Լուիսի յուրաքանչյուր հերթական վեպ գալիս է ապացուցելու այս մտքի իրավացիությունը: Լուիսյան հերոսների մեծամասնությունը սեփական գործողությունների հավաստիության հարցում պաշտպանություն է փնտրում ոչ թե դրանց կատարման տրամաբանականության և ճշմարտացիության մեջ, այլև այն տիպաբանական խմբում, որի արժանի ներկայացուցիչն է ինքը: Ճշմարիտ, թե սխալ, հերոսի կատարած գործողությունը համարվում է ընդունելի, քանզի կրկնօրինակում է իր դասի կամ տեսակի նմանատիպ գործողությունների անիմաստ շարքը:

Ինչպես գրում է գրականագետ Հոնեն «Բեբիթ» վեպի նախաբանում, «ընդհանուր առմամբ լուսիսյան հերոսները բաժանվում են երկու մեծ խմբի՝ «քաղքենիների» և «ըմբոսաների»» (Lewis 1962:9): Քաղքենիներ են, օրինակ, Էլմեր Գենթրին, Գիդեոն Փլենիշը, Ալմուս Պիկերբոն: Ըմբոսաներ են Քերոլ Քեննիքոթը, Նեյլ Քինգզբլադը, Մարտին Էրոուսմիթը և այլք: Սակայն այս տարանջատումը բացարձակ և միանշանակ չէ: Իսկական գրողը նա է, ով կարողանում է դուրս գալ ամեն տեսակ տարանջատումների ու պայմանականությունների արհեստական մակարդակից և բարձրանալ կերպարների կերտման մի նոր աստիճանի, որտեղ բարին ու չարը, հաջողակն ու խռովարարը միաձուլված են իրար, ու դժվար է որոշել, թե որտեղ է հեղինակն անցում կատարում մեկից մյուսին: Ստեղծագործական ամենատարբեր հնարներով կերտված հենց այս կերպարներն են, որ դառնում են իսկական գլուխգործոցներ ու մնում ժամանակակից ու մոդայիկ ոչ միայն պատմական տվյալ ժամանակահատվածի համար, այլ հավերժանում դարերի բովում:

Լուիսի «Մաքուր օդում» վեպը

Ինչպես արդեն նշեցինք, կիսոտականությունն ու Սինքլեր Լուիսի ստեղծագործական արվեստն այնքան էլ հեռու հասկացություններ չեն: Ասվածի լավագույն վկայությունը հեղինակի «Մաքուր օդում» վեպն է, որը պատկանում է Լուիսի ստեղծագործական ուղու առաջին՝ համեմատաբար ավելի թույլ շրջանին, երբ նրա արվեստում ռոմանտիկական տարրերը գերիշխող էին ռեալիստականի նկատմամբ:

Եթե դիտարկելու լինենք Լուիս-գրողի անցած ուղին ամենասկզբից, ապա պարզ է դառնում, որ նրա գրական ողջ ժառանգությունը բաժանվում է չորս հիմնական շրջանների: Առաջինը մինչև «Գլխավոր փողոցը» գրված վեպերն են, որոնք պակաս նպատակային են և դեպքաշատ: Երկրորդ շրջանն ընդգրկում է նրա լավագույն հնգյակը՝ «Գլխավոր փողոցից» մինչև «Գողթվորթ»: Ապա Լուիսի մոտ դարձյալ դիտվում է ստեղծագործական ձիրքի անկում: Ի վերջո, հեղինակի ստեղծագործական կյանքում գալիս է վերջին՝ չորրորդ փուլը, երբ վերագտնելով իրեն՝ Լուիսը դարձյալ կերտում է գլուխգործոց համարվող «Ազնվագարն Քինգզբլադ», «Գիդեոն Փլենիշ» և «Այստեղ դա հնարավոր չէ» վեպերը:

Ժամանակագրական առումով «Մաքուր օդում» վեպը, ինչպես վերը նշվեց, պատկանում է Լուիսի ստեղծագործական կյանքի առաջին փուլին՝ ունենալով այդ շրջանին բնորոշ հատկանիշները: Այս վեպը հեղինակի կիսոտիկ հայացքների լավագույն դրսևորումներից է: Ամբողջ վեպը նվիրված է Քլեր Բոլթփուդի ճանապարհորդությանն ու այդ ընթացքում նրա հաղթահարած արգելք-

ներին: Հոր հետ միասին անցնելով արկածալից մի ուղի՝ հերոսուհին այդ ընթացքում մաքառում է ու առաջ ընթանում, սիրահարվում ու ամուսնանում:

«Մաքուր օդում» վեպը նաև լավագույն ապացույցն է այն բանի, որ ռեալիզմի ավանդույթները որդեգրելուց և ռեալիստական արվեստում հաստատվելուց առաջ Մինքլեր Լուիսը ունեցել է նաև ժողովրդական կողմնորոշում: Վեպում շատ մանրուքներ հենց այդ մտքին են հանգեցնում: Այստեղ կա և՛ արկածալից ճանապարհ, և՛ վտանգի պահին օգնության հասնող ասպետ, և՛ բարի ու երջանիկ ավարտ (happy end): Հիրավի, վեպը Լուիսի այն եզակի գործերից է, որ դրական ավարտ է ունենում :

Վեպի առանցքային կերպարներն են Քլեր Բոլթվուդը և նրա ապագա ամուսինը՝ Միլթ Դագեթը՝ երկուսն էլ դրական հատկանիշներով օժտված: Վեպի գլխավոր հերոսուհին՝ Քլերը, արկածախնդիր կերպար է: Նա երկարատև ուղևորություն է ձեռնարկում հոր հետ՝ չվախենալով մատել մեքենայի դեկին: Գանապարհի յուրաքանչյուր հատված, ուղևորության ամեն օր համառ պայքար է նրա համար: «Դա իսկապես նրա առաջին դժվարին ճանապարհն էր: Նա վախեցած էր: Հետո նա չափազանց զբաղված էր, որպեսզի վախենար, որպեսզի լիներ օրիորդ Քլեր Բոլթվուդ, կամ աջակցեր իր վատառողջ հորը: Նա ստիպված էր վարել» (Lewis 1919:4): Վախին հաջորդում են պայքարն ու արկածախնդրությունը ու «նա ջանում էր մեքենան պահել հիմնական անվահետքերի վրա: Նա ճանկեց-բացեց դիմապակին և կենտրոնացավ ձախակողմյան անվահետքի վրա: Նա զգաց, որ ջանում էր անիվները հեռու պահել ճանապարհի այդ բարձր եզրերը մազլցելուց, որոնք ցայտում էին փոքր շիթերով» (Lewis 1919:5):

Քլերը միշտ չէ, որ այդպիսին է եղել: Մի ժամանակ նրա հետաքրքրությունը ամուսին ու երեխաներ ունենալն է եղել և միայն հետո է ամեն ինչ փոխվել: Աստիճանաբար նա սկսել է հիասթափվել տղամարդկանց բոլոր տեսակներից ու նախընտրել ապրել միայնակ և արկածալից կյանքով: Հերոսուհին սիրում է պայքարել և դժվարություններ հաղթահարել: Ուղևորության ընթացքում նա հայտնաբերում է, որ «նորից ձգտում էր առաջ ընթանալ, շարունակ գնալ, տեսնել նոր վայրեր, նվաճել նոր ճանապարհներ: Նա ոչ մի հեշտ ճանապարհ էլ չէր ուզում հաղթահարել: Նա ուզում էր մի բան, որի դեմ կպայքարեր» (Lewis 1919:45):

Քլերի ճանապարհին հայտնված Միլթը ևս արկածներով հագեցած ու փոփոխական կյանքի խորհրդանիշ է հերոսուհու համար: Քլերը կարող է ամուսնանալ կայուն և հասուն Ջեֆ Սաքսթոնի հետ, ապրել ապահովված կյանքով, բայց նախընտրում է բռնել արկածալից ուղին՝ յուրաքանչյուր օր գնալով մի նոր բացահայտման: Փաստորեն Քլերը գիտակցում էր, որ «նա չափազանց

ծեր է իր համար: Այո, և չափազանց հայրական: Բայց, այդուհանդերձ... Կյանքը Ջեֆի հետ կլինի պաշտպանված, բարի, հարգալից: Բայցև ամբողջ ժամանակ նա ուզում էր, և խելահեղ կերպով գիտեր, որ ուզում էր թռչել երիտասարդ Միլթի՝ իր տղամարդու մոտ. փախչել նրա հետ՝ ձեռք ձեռքի տված, հայտնաբերելով ողջ գունագեղ աշխարհը, ծիծաղելով կյանքի վրա, չվախենալով կորցնել արժանապատվությունը» (Lewis 1919:302):

Իսկ ինչո՞վ էր Քլերը գերել Միլթ Դագեթին: Չի կարելի ասել, թե նա գեղեցկուհի է: Արկածասեր և փոքր-ինչ խենթ այս գեղեցկուհու մեջ Լուիսը Միլթի միջոցով արժևորում է հոգու գեղեցկությունը, այլ ոչ թե արտաքին հմայքը, որ անցողիկ է, ժամանակավոր: Եվ իր գաղտնի մտորումներում Միլթը «ասում էր ինքն իրեն, թե չի հասկանում՝ ինչն է գրավիչ նրա մեջ. նա այնքան էլ կանոնավոր գեղեցիկ չէ, և դրանով հանդերձ... Անշուշտ այնպիսի աղջիկ չէ, որի հետ կարելի է ժամանակ անցկացնել» (Lewis 1919: 59):

Բայց ո՞րն է Քլերի ձեռնարկած ուղևորության իրական դրդապատճառը: Հոր հետ գրույցի ընթացքում հերոսուհին բացում է իր սրտի խորքերում ամփոփված գաղտնիքը՝ ասելով. «Այսպիսի մի արկածի լավագույն կողմերից մեկն այն է, որ ես պետք է ինքս հոգամ իմ մասին: Մշտապես ինչ-որ մեկը ամեն ինչ արել է իմ փոխարեն: Ծառաներ, գեղեցիկ ուսուցիչներ և Դուք, ի՛մ սիրելի ծերուկ» (Lewis 1919:14): Փաստորեն կյանքի մատուցած հնարավոր դժվարություններին անխռով դեմ հանդիման կանգնելու և ճակատագրի քմահաճ փորձությունների հաղթահարման պատրաստակամությունն է, որ հերոսուհուն ստիպել է մի կողմ թողնել ապահով և անխռով կյանքն ու բռնել արկածալից մի ճանապարհ: Հասունացման շեմին Քլերը կայունանալու և համընդհանուր հոգատարությունից ազատվելու խնդիր ունի, ինչն էլ հաջողությամբ ի կատար է ածում: Ծնողը, որ մի ժամանակ հոգատար ձեռք էր նրա համար, այժմ, դստեր համարձակությունից և ինքնուրույնությունից գոտեպնդված, շատ դեպքերում ինքն է սկսում ապավինել նրա օգնությանը: Հայրերի և որդիների իրավունքների հերթագայման ևս մեկ պատմություն պսակվում է հաջողությամբ:

«Մաքուր օդում» վեպը Լուիսի երկկենտրոն ստեղծագործություններից է: Այլ կերպ ասած՝ այն կառուցված է գույգ կերպարների առանցքի շուրջ: Դժվար է ասել՝ որ կերպարն է առավել կարևոր և առանցքային. Մի՞թե, որը հանուն սիրած աղջկա պատրաստ է ամբողջովին փոխել իր կենսակերպը, թե՞ Քլերը, որ նախապատվությունը տալիս է խենթ և վտանգավոր ուղուն: Պարզապես դեպքերի բերումով Միլթն է հետևում Քլերին, գնում նրա հետքերով, ոչ թե հակառակը:

Խոսելով Սինքլեր Լուիսի վաղ շրջանի հերոսների մասին՝ ամերիկացի գրող, գրականագետ Մաքսուել Գայսմարը նշում է. «Փաստը մնում է փաստ, որ մշտապես վկայակոչելով արկածի, հուզականության և «Նոր հորիզոնների» նկատմամբ իրենց հակումը, լուիսյան այս վաղ կերպարները, իբրև խումբ, թերևս դասվում են մեր նամակներում հանդիպող այն բոլոր անհանգիստ երիտասարդ ամերիկացիների թվին, որ վայելում են նոր հորիզոններ կամ ուսումնասիրում դրանք» (Geismar 1962:16): Եվ իրոք, արկածասիրությունն այն հիմնական բնութագրիչն է, որ լավագույնս բնորոշում է Սինքլեր Լուիսի ստեղծագործական ուղու առաջին շրջանի հերոսներին, բայց արտաքին առերևույթ պարզության տակ հեղինակն իրականում խոր իմաստ և ուղերձ է ամփոփել: Քլերը կարող է մնալ իր ծննդավայրում, ապրել անվտանգ և անխռով կյանքով: Բայց այդպես նա ոչնչի չի հասնի: Միայն շարժը կրեթի փոփոխության՝ հնարավորություն տալով տեսնելու և ճանաչելու նոր հորիզոններ: Այդպես էլ ամբողջ ժողովուրդը, եթե լռի և հանգիստ ապրի նույն կերպ, կշարունակի ապրել միևնույն անփոփոխ կյանքով, որ հնարավորություն չի տա նրան գնալ բարեփոխումների: Իսկ եթե ընթոստանա և փորձի ինչ-որ բան անել, հնարավորություն կունենա խուսափել լճացումից:

Այսպիսով, «Մաքուր օդում» վեպը Սինքլեր Լուիսի առաջին շրջանի լավագույն ստեղծագործություններից է, որը, սակայն, իր գեղագիտական հատկանիշներով զիջում է հեղինակի՝ քսանական թվականների վեպերին:

Եզրակացություն

Քսաներորդ դարի ամերիկացի արձակագիր Սինքլեր Լուիսն իր ստեղծագործական ուղին սկսեց իբրև ռոմանտիկ գրող: Ռոմանտիկական հայացքներ կարելի էր գտնել հեղինակի գրեթե բոլոր վեպերում, բայց Լուիսի կիստոտիզմը առավել հաջող կերպով դրսևորվեց հատկապես նրա առաջին շրջանի ստեղծագործություններում:

Հեղինակի այս շրջանի լավագույն վեպերից էր «Մաքուր օդում» վեպը, որտեղ հեղինակի ռոմանտիզմն առավել քան ակնհայտ է: Վեպը արկածասեր Քլեր Բոթվուդի պատմությունն է, ով, ուղևորություն ձեռնարկելով Խաղաղ օվկիանոսի ափի երկայքով, ի վերջո հաջողությամբ ավարտում է այն՝ միաժամանակ գտնելով իր երկրորդ կեսին:

Եթե փորձենք Քլերին բնորոշել ըստ այն դասակարգման, որին ենթարկվում են լուիսյան հերոսները, ապա կասկածից դուրս է, որ նա ըմբոստ կերպար է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Anderson, Sh. (1962) *Sinclair Lewis*. // A Collection of Critical Essays. / Ed. by M. Schorer. N.J.: Englewood Cliffs.
2. Bloom, H. (1962) *Sinclair Lewis's Arrowsmith*. N.Y: Chelsea House Publishers.
3. Geismar, M. (1962) *Origins of a Dynasty*. // A Collection of Critical Essays. / Ed. by M. Schorer. N.J.: Englewood Cliffs.
4. Lewis, S. (1919) *Free Air*. New York: Grosset & Dunlap Publishers.
5. Lewis, S. (1962) *Babbitt*. M.: Foreign Languages Publishing House.
6. Parry, S.E. (2005) *Go East, Young Man: Sinclair Lewis on Class in America*. New York: Signet Classic.
7. Schorer, M. (1962) *Introduction*. // A Collection of Critical Essays. / Ed. by M. Schorer. N. J.: Englewood Cliffs
8. Schorer, M. (1962) *Sinclair Lewis and the Method of Half-Truths*. // A Collection of Critical Essays. / Ed. by M. Schorer. N.J.: Englewood Cliffs

The Romantic Views of Sinclair Lewis and His novel “Free Air”

The article studies the realization of romantic elements in the worldview of Sinclair Lewis, a 20th-century American novelist. It discusses the first phase of Lewis's writing life experience when romanticism finds its utmost vivid expression in his works. Firstly, the general description and division of Lewis's characters are given, and then the novel “Free Air” is presented. Belonging to the first phase of the author's literary life, this novel contains all the vivid peculiarities of Lewis's romanticism.

Романтические взгляды Синклера Льюиса и его роман “В свежем воздухе”

В статье рассматривается реализация романтических элементов в мировоззрении Синклера Льюиса – американского автора двадцатого века. Изучается первый период творчества Льюиса, когда романтизм наиболее очевиден у автора. Сначала дается общий анализ и классификация героев Льюиса, затем рассматривается роман “В свежем воздухе”. Этот роман, принадлежавший первому этапу творческой жизни автора, наилучшим образом концентрирует в себе все те очевидные черты, которые характерны для романтизма Льюиса.